## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

ՀայաստանիՀանրապետությանՎայոցՁորիմարզիԵղեգիսհամայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19հուլիսի 2018թվականի N55 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ <ԳԵՈՄԱՅՆԻՆԳ>ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով <<Գեոմայնինգ>> ՍՊԸ-ի 12-ը հուլիսի 2018 թվականի N07-03 գրությունը, մարզպետի 19/07/2018թ. N 01/12.1/5053-18 գրությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Մերժել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի վարչական սահմաններում <<Գեոմայնինգ>> ՍՊԸ-ի կողմից մինչև 31-ը օգոստոսի 2019 թվականը վարձակալությամբ երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու ստորև ներկայացված պետական սեփականություն հանդիսացող հողատեսքերում՝

1) Գյուղատնտեսական նշանակության, արոտավայր գործառնական նշանակության, մակերեսը՝ 56,08802 հա, ծածկագիրը՝ 10-041-0557- ,
2) Գյուղատնտեսական նշանակության, արոտավայր գործառնական նշանակության, մակերեսը՝ 70,57105 հա, ծածկագիրը՝ 10-041-0557- ,
3) Գյուղատնտեսական նշանակության, արոտավայր գործառնական նշանակության, մակերեսը՝ 25,22751 հա, ծածկագիրը՝ 10-041-0557- ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2018 թվականի N 54 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ստեղծել Եղեգիս համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի կամ տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար խորհուրդ համաձայն սույն որոշման կից հավելվածի:
2. Խորհրդին՝ գործունեությունը իրականացնել համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 17-ի <Եղեգիս համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին> N 24-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 1

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ <u>ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ</u>

Հավելված

Եղեգիս համայնքի ավագանու

19-ը հուլիսի 2018թ.թիվ 54Ա որոշման

Եղեգիս համայնքի ղեկավարին կից խորհրդի կազմը

1.Դավիթ Օհանյան՝ համայնքի ղեկավարի տեղակալ-խորհրդի նախագահ,

2.Աննա Դանիելյան՝ աշխատակազմի քարտուղար-խորհրդի քարտուղար,

3.Լուսինե Գրիգորյան՝ ֆինանսական բաժնի պետ-խորհրդի անդամ,

4.Ալեքսան Ազատյան՝առաջին կարգի մասնագետ- խորհրդի անդամ,

5.Աշոտ Հարությունյան՝ավագանու անդամ-խորհրդ անդամ,

6.Մխիթար Վարդանյան՝ ավագանու անդամ-խորհրդի անդամ,

7.Արման Խաչատրյան՝համայնքի բնակիչ-խորհրդի անդամ/Շատին բնակավայր/,

8.Սմբատ Խլղաթյան՝ համայնքի բնակիչ-խորհրդի անդամ/Արտաբույնք բնակավայր/,

9.Նելլի Հարությունյան՝ համայնքի բնակիչ-խորհրդի անդամ / Եղեգիս բնակավայր/,

10.Արման Հովհաննիսյան՝ համայնքի բնակիչ-խորհրդի անդամ/Քարագլուխ բնակավայր/,

11.Հրաչիկ Եղիզարյան՝ համայնքի բնակիչ-խորհրդի անդամ /Աղնջաձոր բնակավայր/,

12.Արթուր Հարությունյան՝ համայնքի բնակիչ-խորհրդի անդամ/Թառաթումբ բնակավայր/ ,

13. Միեր Հովակիմյան՝ համայնքի բնակիչ- խորհրդի անդամ/Սալլի բնակավայր/,

14.Մարտին Մարկոսյան՝ համայնքի բնակիչ- խորհրդի անդամ/Շատին բնակավայր /:

Համայնքի ղեկավար Ա. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2018 թվականի N 53 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԳԼՈՒԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.015 ՀԱ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2011թ. թիվ 1918-Ն որոշումը <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 17.01.2001թ. թիվ 30-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> և հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 27/06/2018թ. թիվ 124 դրական եզրակացությունը

ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Սամվել Միսակի Կիրակոսյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.015 հա այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր 10-044-0227-0035/ փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության /ավտոտեխսպասարկման կետ/:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Գևորգյան Արման բացակա

Բաղալյան Նվեր բացակա

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա գտն. արձակուրդում չի մասնակցել

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան բացակա

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---


Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2018 թվականի N 52 Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի 2018 թվականի բյուջեում կատարելու վերաբաշխումներ՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Գևորգյան Արման

Բաղալյան Նվեր

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 19 հուլիսի 2018թ.

N52 - Ն ավագանու որոշման

Եղեգիս համայնքի բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումները՝

Պակասեցնել

Համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 9000000 (ինը միլիոն)դրամ

Ավելացնել ֆոնդային բյուջե

6.4.1 „ Փողոցների լուսավորում,, գործառնական դասակարգման

5112 „շենքերի և շինությունների շինարարություն հոդվածին,, Արտաքույնք բնակավայրի փողոցային լուսավորության շինարարության համար

Պակասեցնել

01.01.01 „օրենսդիր և գործադիր մարմիններ,, գործառնական դասակարգման 4112 „պարգևատրումներ դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ,, հոդվածից 100.0 հազ. Դրամ

Ավելացնել

01.01.01 „օրենսդիր և գործադիր մարմիններ,, գործառնական դասակարգման 4214 „կապի ծառայություններ,, հոդվածին 100.0 հազ. դրամ

Եղեգիս համայնքի ղեկավար Ա.Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հուլիսի 2018 թվականի N 51 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2018 թվականի երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Գևորգյան Արման

Բաղդասյան Նվեր

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված 19 -ը հուլիսի 2018թ.

N 51Ա ավագանու որոշման

Եկամտային մաս. /հազար դրամ/

| Եկամտատեսակ | Նախատեսված /2-րդ եռամսյակ/ | Կատարողական /2-րդ եռամսյակ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 4 150.0 | 1 872.7 | 45 |
| Գույքահարկ | 8 200.0 | 5 283.1 | 65 |
| Տեղական տուրքեր | 500.0 | 190.8 | 38 |
| Ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ | 8 250.0 | 3 110.3 | 38 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 69 208.25 | 69 208.25 | 100 |
| Այլ եկամուտներ/Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 10 500.0 | 1 951.2 | 19 |

| Ծախսային մաս | Նախատեսված /2-րդ եռամսյակ / | Կատարողական /2-րդ եռամսյակ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 52 000.0 | 48 946. 571 | 94 |
| Պարգևատրումներ | 1 500.0 | 350.0 | 23 |
| Էներգետիկ ծառայություններ | 2 500.0 | 2 596.0 | 103.8 |
| Կոմունալ ծառայություններ | 4 500.0 | 2 184.0 | 97 |
| Կապի ծառայություններ | 750.0 | 749.0 | 100 |
| Գործողումների և շրջագայությունների ծախսեր | 450.0 | 166.6 | 37 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում | 10 250.0 | 9 139.1 | 89 |
| Դրամաշնորհներ | 11 000.0 | 1 678.5 | 15 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 2 000.0 | 1 670.0 | 83.5 |
| Այլ ծախսեր | 35 773.9 | 0 | 0 |
| Շենքերի և շինություններ կապիտալ վերանորոգում,շինարարություն | 5 500.0 | 4 240.0 | 77 |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 750.0 | 1 072.0 | 143 |

Համայնքի ղեկավար ............................. Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀայաստանիՀանրապետությանՎայոցՁորիմարզիԵղեգիսհամայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ, հեռ. 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19հուլիսի 2018թվականի N50 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդմասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել 19-ը հուլիսի 2018 թվականի թիվ 7 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝
2. Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2018 թվականի երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին,
3. Եղեգիս համայնքի 2018 թվականի բյուջեում վերաբաշխումներ կատարելու մասին,
4. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 0,015 հա հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին,
5. Եղեգիս համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին ձևավորելու մասին,
6. Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի վարչական սահմաններում <<Գեոմայնինգ>> ՍՊԸ-ի կողմիցերկրաբանական ուսումնասիրություններ կատարելու քննարկման մասին:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ